



ՀԱՏՈՐ ԻԷ.

1889

ԱՊՐԻԼ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ՏԵՍՈՒԹԻԻՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅՐ

ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՆՇԱՆԱԳՐՈՑ ՎԵՐԱՑ

(Տես էջ 21)



ԱՆԸՆԹԱՅ յօգուածիս վերջ խոստացայ խօսել մարտիան
յարմարագրութեան փոփոխութեան և նորա պատճառաց
մասին. և ահաւտիկ կու գամ այժմ իմովսան կատարել
առաջին կէտը. թողլով զերկրորդը՝ վերջին յօգուածին:

Արդ այսպիսի դժուարանքներն խնդրոց գոհացուցիչ
լուծուձն տալու համար, հարկ եր նախ քան զամենայն մի
առ մի աչքէ անցնել Ե գործէն սկսեալ մինչև ցոյն եզած

մեր արդիւնաշատ նախնեաց գէթ գլխաւոր երկասիրութիւնքը, որոնց շղթային
շարունակութիւնը՝ Զ գարուժ միայն ընդհատուած է, բանալով մեր առջև ան-
ստուգութեան խորհրդաւոր վիհ մի. որուն քաղաքական պատճառները միայն մեզ
քաջածանօթ են: Ոմանք գիտելով հայկեան Դպրութեան այս ընդարձակ և
պարապ միջոցը՝ կողջին զայն երկաթի գար. սակայն ես կը խորհիմ, եթէ ստու-
գիւ Զ գարն էր երկաթի և գրական ունայնորթեան գար, անմիջապէս նորա
յաջորդ գարուժ ինչպէս կարացին Սեբէոս և նմանիք նորա ասկեղէն գրոց և լե-
զուական հարստութեան մաքուր բովեր գարձեալ յառաջ բերել: Այս հարցս և
նորա հետազոտութիւնն՝ ուղղակի գրականութեան ձեռնհաս անձանց կը պատկանի,
և ես չեմ ուզեր ասա իմ ասպարէզս ընդարձակել այդ կէտին վերայ: Իսկ գալով մեր
ձեռքն հասած երկասիրութեան ուսումնասիրութեանը՝ վերայիշեալ տեսակետով,

անդէն պարտք կը համարիմ ծանուցանել, թէ « Հանգիսի » բազմահմուտ յօգուտ ծագերն, արդէն իսկ ապացուցած է առաջին խնդիրն, որ է, յարմարագրութեան յաճողաբար կրած փոփոխութիւնքն է խանգարմունքը դարուց 'ի գարս: Բայց որով հետե նա նախ ընդհանուր օրինակներ միայն մէջ բերած է առ այս, յաճախ լռելով նոցա աղբիւրքն և հեղինակութիւնքը, որով ընթերցողն կը ստիպի այն օրինակներէն շատերն՝ արձանագրութեան վերագրել, որ իրք գրչագրութեանց մէջ կը գտնուին, և 'ի հնագոյն իսկ արձանագրութեանց մէջ բերուած յարմարագրութեան վրիպակներն այլ գրչագրութեանց վերագրել: Բ. Նոնոյն իսկ հնագոյն ձեռագրաց մէջ գտած և մէջ բերած ուղղագրութեան օրինակներն առնելով իրեն շոշափելի իրողութիւնս, կը թուի ընծայել զնոսս կամ այն երկասիրութեան հեղինակութեանց, և կամ այն գարուց՝ յորս նոքա ընդօրինակեցան: Սակայն յայտ իսկ գիտելու ենք, թէ կան պարագաներ, զորս եթէ 'ի նկատի առնումք՝ կարեն այդ կրկին ընծայութիւններէն բոլորովին տարբեր հետեութիւններ յառաւ անել: օրինակի ազգաւ, եթէ բնէնք, թէ արդեօք այդ գրչագրաց և արձանագրութեանց գրողներն օտարազգի էին, թէ ընդհակառակն հայազգի. գրագէտք, թէ անվարժք՝ ի գրոց գիտութենէ: Այս պատճառաւ ստիպուեցայ. Ա. աչքէ անցնել մեր նախնեաց հրատարակութիւններն՝ ժամանակագրական կարգաւ, ուշ գնելով միայն յատուկ անունանց և երբեմն երբեմն օտարազգի հատարակ անունանց իսկ. Բ. մեր ձեռքը հասած արձանագրութիւնքը, զորս ընձեռեց ինձ ամենայն ազնուութեամբ Հ. Ղևոնդ Վ. Ալիշան: Ահաւասիկ կրկնակի հետազոտութեանցս արդիւնքը, զորս ընթերցանելէս գիւրութեան համար կը համառուեմ 'ի մի, նշանակելով միանգամայն հեղինակաց անունանքն և գործերն, հանդերձ պահանջելի գիտողութեամբք:

Ա. Աւաթանդեղ՝ Σιλβανοί Զիդպէ տառագարձուած է, πεδαιγγοῦς պատագրոս, 'Αρταβανης Արտաւան, Κοσταντινοῦς Կոստանդինոս, Νιφάτης Դ պատ, Ναρσίσοϋς՝ ներգիս, Արտիթէսը — 'Αρτίδης, յունարէնի թարգմանիչն՝ Ἀρτίος գարձուցեր է: Ա. Զենոբայ (Պատմ. Տարօնի), Հայոց Աւաթէոյն անունը՝ գրուած է մերթ թաղէոս և մերդ ալ թարթոս. այսպէս են նաև Ալիքնոս և Ագգէնացի. Ալիւղլասը՝ Աքիւղաս, Մանազկերսը՝ Մանձկերս: Ա. Փաւստոսի՝ Արարատականի մարաբաղաբ 10 անգամ թաւրէժ գրուած է և Յ անգամ թաւրէչ. Սասանեանց ոտանը՝ երեք տարբեր յարմարագրութեամբ գրուած է, այսինքն է, Տիգրոն, Տիգրան և Տիգրիոն. այսպէս է նաև Հայաստանի հետեւեալ գաւառն Տոսպ, Տոքը և Տոսր:

Ա. Մ. Խորենացոյ (Պատմութիւն Հայոց) կը գրուին փոխադարձաբար Աղքը և Աղնիք. Այրարաղ և Այրարատ, Կապան Զօրայ և Զորայ, Մեւորայիմ և Մեծրայիմ, Միդրաօսը՝ Միթրաօս, Նախճաւան և Նախչաւան, Մամշատ և Մամշար, Մամբատ, Մամբար, Τερβαντος՝ մերդ Տերենդ և մերդ այլ Տերենտիոս, Քասաղ և Քասախ, մի և նոյն ասորական անունը թէ Աղէ և թէ Աւտա գրուած է: Ի թարգմանութեան անդ Քրոնիկոնի Ստեբեայ Ναβουχδδόνσοϋր՝ բաղմից Նաբոկոդոնոսորոս տառագարձուած է. Εξερχορ Ելեկիսս, (այսպէս ըրած է նաև Աստուածաշնչի թարգմանիչը). եգիպտական անունս Bites գարձուած է Բիդէս, Աթենացի թարգարդին անուն Սανδίου՝ Պանտիոն, Agrippa՝ Ագրիպպաս: Իսկ Աշխարհագրութեան մէջ գեռ աւելի են այսպիսի յեղափոփոխ տառագարձութեան օրինակներ, բայց ես զանց կ'ընեմ զանոնք՝ 'ի մէջ անել, որովհետև վերջին ժամանակներում իսկ գործածական լինելով հետզհետե նորանոր յաւելուածներ ներմուծուած են անգ:

Ա. Ելիշէի (Պատմ. Վարդանանց) փոփոխակի գրուած են Արհնի և Արխնի, Ար.

ճախ և Արցախ, Ընծային և Ընձայացի, Հարաման և Խարաման, Կապուկոն և Կապ-
կոխ. առ Խորենացւոյ գրուած 'Դրասխանակերտն' առաջ Դրոսանակերտ եղած է, և
Սաջաստանը՝ Սակաստան։ Առ 'Լոզարայ կը գտնենք Բաբգէն և Բաբիկն, Փափագ և
Փապակ, Արիստոտէլի առ Սիւլքաւոր գրած Թղթոյն Թարգմանութեան մէջ յու-
նարէն 'Αλέξανδρος' Ալեքսանտրոս գործուած կը գտնենք, ατλάντικη աղնդական և
'Εμπεδοκλήσερ Էմփէդոկլէս, Իաւրթ աշտղթի Սաճմանայ մէջ Δουκουργος ուղղականը՝
գործուած է Լիգուրկոս, իսկ կոչականն Լիկոյեղէս։ Պիսիգեայ Թարգմանութեան
մէջ βαλκαμοσερ՝ գործուած է վալամոն, և 'Οργανονը՝ մերգ որկանոն և մերգ այլ
որգանոն, Առ Սերէոսի (Պատմ. 'ի Հերակլ)' Հայոց Կողովոյ գաւառն երկոց Գողգո-
վիս գրուած է, Շաւգը՝ Կօկ, Tabaristanը՝ Տապարիստան, յուճական Ευστάσιοςը՝
երկոց Յուստիս և միանգամ ձիշա Յուստիս գործուած է, Ասորեստանեայց 'Դիւս-
թը՝ 'Իզլաթ գրուած է, և Հայկական 'Իմաքսեանը՝ 'Իմախսեան, Բա՛շը՝ Բախլ, և Սա-
քիստանը՝ Շախստան. Վրաստանի մայրաքաղաքը՝ մերգ Տփղիս և մերգ Տփլիս։ Առ
Ղենոզ Երիցոս (Պատմ. Արարացւոց) արաբերէն Ֆուրկանը՝ փուրկանի գործուած
է, Ջաբաւրին՝ Սարարի, Մուրշինը՝ Մուրշինի, Վազէլը՝ Բասղի, Չահդին՝ Ջահդի և
Պերոզը՝ Փերոզ։

Առ Մ. Կալանկատուացոյ (Պատմ. Աղուանից) Պարէտը՝ փարէա գրուած է, Θασ-
ταλινά՝ Հէտաղիա, Մաքթաջը՝ Մաղիթայ, Πανταλίωνը՝ Պանդալեոն, Ολιμπιάδα
Ոլիմբիաթ, Carmelinosը՝ Գարմէկոն, Օթմանը՝ Օտման, Պերուզը՝ Պերոս, Վարազը՝
Վարաթ, Կաւառը՝ Գաւառ. մի և նոյն Աղուան էկէղեցականի անունը մերգ Բաթ-
գրուած է և մերգ Պապ։ Առ Թովմ. Արծրունւոյ (Պատմ. Արծրունեայ) յուճական
'Αντίπατροςը՝ Անթիպատրոս գործուած է երկոց, Ափիսազը՝ Ափիսազ, Ստահրացին
Ստախրացի, Բուզան՝ Բուխա, Թակղաթ փաղաւարը՝ Թաղղաթ փաղաւար, Յովսէպո-
սը՝ Յովսէփոս, Նաբոգոգոնոսուրը՝ Նաբոդոգոնոսոր։ Այսպէս նաև Ասորեստանեայց
Թագաւորաց անունները մինչև ցկիւրոս՝ Եւսեբեայ ժամանակագրութեան Թարգ-
մանչէն տարբեր ուղղագրութեամբ մէջ բերուած են առա. օրինակի աղաքաւ, Սփե-
րոսն՝ Ջփերոս եղած է, և Գաղառորէսը՝ Բաղէպարէս, Լամպրիդէսը՝ Լամրիդէս, Ակ-
րաղանէսը՝ Ակրապաղէս։

Արդ ցայտ վայր մէջ բերուած օրինակներէն կը տեսնուի փոքր 'ի շատէ, թէ նոյն
իսկ և գարեն սկսեալ մինչև ցփ գար գրուած մատենագրաց քով իսկ կը գտնուին
փոփոխ ուղղագրութիւնը՝ արեւելեան և արեւմտեան անուանց յարմարագրութեան
մէջ։ Արդ այսպիսի մի ակնյայտի իրողութեան առջև՝ այս կրկին հարցերս պէտք է
ընել. այսինքն է. Ա. Արդեօք այդ էկէլլութիւնն ուղղակի և ամբողջապէս վերոյիշեալ
հեղինակաց ընծայելի է իրօք, թէ ընդհակառակն գարեբէ վերջ նոցա երկասիրու-
թիւններն ընդօրինակող ազգայ գրչաց։ Բ. Կարելի է արդեօք ասոնցմէ հեռանցիւն,
թէ մետրովեան յարմարագրութիւնն՝ իւր հաստատութեան ժամանակէն 'ի վեր
միշտ ունեցաւ իւր ազատ պարագաներն և բացառու թիւնքը։

Առաջին հարցին ուղղակի պատասխանելով, ինչ կը թուի, թէ մեծապէս կը սխա-
լինք, եթէ բոլոր վերոյիշեալ խոսորմունքն՝ առանց բացառութեան ընծայելիք եր-
կասիրութեանց հեղինակաց, և կամ եթէ ընդ հակառակն, ամբողջապէս ընդօրի-
նակողաց արգասիք համարինք։ Այլ պէտք է ըսել, թէ այն սակաւամթիւ յունական,
լատինական և նոյն իսկ արաբացի և պարսիկ անուանց անձիք յարմարագրութիւնքն՝
ընդհանրապէս և առաջնաբար յընդօրինակողաց ներմուծուած են. իսկ երկրորդա-
բար՝ յունարէն բաղաձայն տառերու այլ և այլ պարագայից մէջ իրարու հանդիպե-

լուսն և ձայնափոխութեան հետեւանք են. ինչպէս օրինակ իմն, τρογγιλνոց Պիսիդեայ
 (Թարգմանութեան մէջ γ տառը χ տառին հանդիպելով՝ գլխովին կորուսեք է իւր
 ձայնը՝ լինելով « տրոքիլոս » և ἔγχευσε՝ « էկքեդիս » եղած է: Իսկ ֆեսցածներն՝ որ
 մեծամասնութիւն կը կազմեն, ես չեմ տարակուսիր մասամբ ընծայել այն հնչիւնա-
 կաց՝ առ որս կը գտնուին և մասամբ ալ անվարժ ընդօրինակողաց և տպագրողաց:
 Եւ յիրաւի, այս կրկին գիտողութեանց առաջնոյն իբրև հաստահիմն ապացոյց հա-
 մարելու ենք, վերոյիշեալ հնչիւնակութեանց թէ ինքնագիր և թէ՛ Թարգմանուած
 երկասիրութեանց մէջ ընդհանուր և միշտ հաստատուն կերպով պահած կանանք,
 որով յաւնարէն և լատիներէն յատուկ անուանքն և հասարակ բառերն՝ նոցա համա-
 ջօր մետրոքեան տառերով յարմարագրած են, որ ըստ ինքեան անկարելի էր, եթէ մի
 որոշ ուղղութիւն և ստիպողական կանոն չուենային: Բ. Այն արևելեան յատուկ
 անուանքը՝ զորս ամենայն խղճմանութեամբ յուշարէն բնագիրներէ և ըստ յունարէն
 ձայնականութեան դարձուցին, օրինակ իմն, Եղեկիս, Յորդանէս, Միրրիգատեոս,
 Մեսարայիմ, Յեսու, Նագովցեցի, Սիմէոն, Սենեկիս, Սեղեմ, տարբեր ձև ունին
 անոնցմէ՝ զորս ըստ ընկի ձայնից դարձուած են և ոչ ըստ յունին, օրինակի աղագաւ-
 Եղեքիս, Յորգանան, Միրիդատ, Մեծրայիմ, Յեղու, Նաթրացի, Շմաւոն, Սենեքիս
 Եղիշէ, Այս երևութիս պատճառն Յունաց կողմանէ՝ եղած է բողաձայնից պակասու-
 թիւնն, ուստի և արևելեան անուանց ձայնէրը քիչք հնչելու անբաւականութիւնն.
 Իսկ Հայոց կողմանէ՝ եղած է նախ հայկական բաղաձայն տառից ամենաճիշտ հա-
 ռչատուութիւնն և արևելեան որ և է հնչումն կամ ձայներն արտասանելու բաւակա-
 նութիւնը: Երկրորդ, մէկ կողմէն այն աղգաց հետ ունեցած դարցիութիւնն և
 բարբառոց ընդ երկար կիրառութիւնն, իսկ միւս կողմէն այլ իւրացանչիւր ազգի
 անուանքն իբեցն յատուկ և ընթիկ ձայներով արտասանելու իմաստուն նպատակը.
 որով հարկ կը լինէր երև.մն 'ի յունէն խոսորելու և երբեմն այլ Արևելեայց, Եւ-
 իրաւի, այս բանս ենթագրութեան չէ, այլ գրական և ջօրագրից մի ճշմարտութիւն,
 զի ամենուրեք գործագրուած կը տեսնենք թէ ասորերէն և պարսիկ, և թէ նոյն իսկ
 յունարէն բնագրոց Թարգմանութեանց մէջ, և թէ ալքէ անցուցեր ենք զլատուսնայ,
 Թադէոս Առաքելոյ և Սանգիսոյ կուսի պատմութիւնն և զնոյն ինքն զլատուածա-
 շունչ գիրս մեր: Սակայն ես իբև յայտնի և լատագոյն օրինակ կը ներկայացնեմ առ
 այս՝ Զգօնի Զառից Թարգմանութիւնն, ուր դարձուած են (Սամուէլ) Դամուէլ, (Սե-
 մը) Շեմ, (Աբել) Հաբել, (Ռաբէլ) Հոսթել, (Յեսուն) Յիշով, (Աքաբաբ) Ախաբ,
 (Սիկեմացի) Դիկեմացի, (Սամարիան) Դամրին, (Յովսէէ) Խոյա և Հոյա, (Սա-
 ւուղը) Դաւուղ և (Ոփոնին) Յօրնի:

Իսկ գաւով 'ի պատմասիրանի երկրորդ հարցին՝ չեմ տարակուսիր ըսել, թէ նոյն
 իսկ 'ի Ժամանակն Թարգմանչաց՝ և Թարգմանչաց մէջ իսկ եղան տարբերութիւնք
 ոչ սակաւք արևելեան և երբեմն արևմտեան աղգաց անուանց յարմարագրութեանց
 մէջ: Յիրաւի, նախագաստութեանս երկրորդ կէտին նկատմամբ կարելի է նշանակել
 հետեւեալ պատճառներն այսպիսի տարբերութեանց. Ա. Յունասէրքն 'ի Թարգմա-
 նիշս՝ որպիսի են Դաւիթ անյաղթ, Մովսէս և Մամբրե, 'ի Թարգմանէն զյունարէն
 բնագրոս, կ'սխորժէին և կը ջանային իսկ նաև զարևելեան անուանս յունարէնի
 հնչման և ուղղագրութեան համաձայն դարձնել. իսկ ասորաւորքն և պարսկաւորքն՝
 ըստ ասորական և պարսկական արտասանութեան և ուղղագրութեան, և յիրաւի
 վերոյիշեալ կրկին ձևով յարմարագրութեան մէջ բերուած օրինակներն կը համա-
 ըրիմ ես իբրև առհասարակ այսպիսի ստորոգ եղելութեանց, Բ. Գաղաճմանքն ա.

րեւելեան գրոց և նոցա բաղաձայնի գրերու այլ և այլ պարագայից մէջ եղած իրա-
րացման և ձայնափոխութեան՝ յաճախ կը պատահէր, որ ըստ այնմ ևս 'ի թարգ-
մանին յարմարագրէին և արտասանէին զանուանս. իսկ անհմուտքն և հ'աւակեք՝
ստիպուած էին որ և է պարագայից և տառերու բաղադրութեանց մէջ՝ հպատակել
կոյր զհոգրայն մեքովքեան յարմարագրութեան կանոնաց, և բոլոր այն տառերն
վերագրել և արտասանել։ Արդ այս բանս մեր օրերում եղած թարգմանչաց և թարգ-
մանաբար յօրինուած գործոց մէջ իսկ ստէպ կը հանդիպի, երբ ռուսերէն բնագրի
թարգմանութեան մէջ գերմաներէն բնիկ անուանք՝ ռուսական տառերու և հնչման
համեմատ կը դարձուին, գաղղիական անուանքն՝ իրրե իտալական, և կամ իտալերէնն
իրրե լատին անուն։ Արդ այն ինչ որ այժմ սովորական է, կարելի չէ որ Ե, Է և այլ
դարերում բնաւ չի հանդիպէր, իսկ նկատմամբ երկրորդ կէտին, այսինքն է, արեւ-
ելեան՝ բայց ի մասնաւորի հայեցի անուանց ուղղագրութեան մէջ 'ի հայերէն երկա-
սիրութիւնս, պէտք է ըսել, թէ հմուտքն և քաջաբանք և թէ անհմուտքն և հետե-
ւակք առհասարակ բացառութիւններ կազմեցին, սակայն դիտելու ենք որ այսպիսի
բացառութիւնք չեն և ոչ իսկ կարեն մեքովքեան կանոնաց հակառակ՝ յարմարա-
գրութեան փոփոխմունք և խռոտմունքներ համարուիլ, որովհետեւ այն յարմարա-
գրութիւնն և կանոնները՝ յունարէն ալփաբետին փոխ առնուած քն տառերու հա-
մար միայն հաստատուած էր և այն տառերով գրուած արեւմտեան և արեւելեան
անուանց մասին միայն կը զօրէր և կը զօրէ։ Իսկ պարսկերէն և ստորերէն ալփա-
բետներէն փոխ առեալ տառերու համար՝ որոշեալ և ընդհանուր կանոն չկար, այ-
նու զի՝ այն աղբաց բաղաձայնները բնականապէս չէին կարող հաստատուն կանոնաց
ենթարկուիլ, որովհետեւ մէկ կողմանէ ձայնաւորաց սակաւութեան պատճառաւ,
իսկ միւս կողմէն ալ կիրառութեանց և շաղկապմանց համաձայն՝ գլխովին տար-
բեր ձայներ կ'առնուին և կը ապին։ Ուստի եթէ կանոն ևս ենթագրենք, պէտք էր
որ կամ իրենց բնիկ անուանքը նոցա լեզուով գրելու և կամ զնոսայն իրենց լեզուով
գրողմբու պարագայից մէջ պահուած լինէր, իսկ պարզապէս հայեցի բառագրու-
թեանց և անուանագրութեանց մէջ, զորս յառաջդրոյն 'ի գրի հարած չէին Սահակ
և Մեսրոպն առաջին թարգմանիչք մեր, իւրաքանչիւր մատենագրի լսելիքն էին միակ
կանոն, և ըստ մարմանիւր քաջակիրթ կամ անկիրթ լսելեաց, ոմն այսպէս կը տա-
ւագրէր և ոմն այնպէս։ Հետեւաբար ռուսի մէջ այն անուանքն, զորս փափկախօսիկ և
կիրթ գտաւորն բնակ մատենագիրը՝ պէտք, կենով, արեւով, Ժայով, Ճէով և հոյով
կը հնչէր և կը գրէր, նոյնիւրը լեւնաբնակ, խոշոր և բիրտ գաւառացին ընդհակա-
ռակն, բնով կամ փիւրով, գիմով կամ քեով, գայով կամ թոյով, ջեով կամ չա-
յով, ձայով կամ ցոյով և խեով կ'արտասանէր և գրէր։ Եւ յիշուի, այսպիսի մի
ստոյգ եղելութեան իրրե հարազատ ծնունդ համարելու ենք հայերէն Դպրութեան
և վերջիշեալ մատենագրաց քով եղած մի և նոյն՝ բաղաձայնութիւն յատուկ և հոստաբան
անուանց տարբեր աստիճանի կամ այլահնչելն բաղաձայններով ուղղագրութիւնքը,
յորով մի քանին միայն կը շատանամ յիշել ասա. իսնկտրեմ և խանդարեմ, անկանիմ
և անդանիմ, ածուխ և ածուղ, զնդան և զնտան, ընտօնին և ընդօնին, Ճիւղք և
Ճիւղպք, Արձախ և Արցախ, Նախճաւան Նախջաւան և Նախջաւան, հեճուպ և հե-
ջուք, ինծ և ինձ, թաղանթ և թաղանթ, թմրութիւն և թմրութիւն, թնձ կամ և
թնձկամ, փափագ և փափաք և այլն։ Արդ այս և ասոնց նման գասական բարբառոյ
բառից գրութեան մէջ՝ իրօք կը ներկայանան մեզ Հայաստանի Գ, Ե և յաջորդ գա-
րուց գաւառական այլահնչելն, որոնց թիւն անշուշտ տասնպատիկ աւելի

պիտի լինէր, եթէ Ս. Սահակ եւ Մեսրոպ չկանխէին անդէն եւ անդ յետ գիւտի
դրոց եւ Ս. Գրոց թարգմանութեան ձեռքով մարմնաւորել հայկական բանից եւ ձայ-
նից անսպառ բովորութեամբ գէթ հարկաւոր եւ գործածական մասը, եւ մարմնաւորել այ-
րարատեան մշակութեամբ բարբառայն եւ արտասանութեան համաձայն եւ թողուլ իրեն
անընթեք եւ հետեւելի ժառանգութիւն յետագայից: Երբեք, եթէ նոքա հաց բաւը՝
ցոյով գրուած չի լինէին անդէն իսկզբան, եւ չորրորդ շէնով յետագայից մէ ոմանք հոս,
ոմանք հազ եւ այլք հազ եւ հաճ պիտի գրէին, իսկ շուրջ՝ ձուր եւ չուր: Ուրեմն այս
անհրաժեշտ հարկս եւ պարագայքս իսկ կը պահանջէին, որ այրարատեան եւ ոչ թէ
Ռըշտունեաց կամ Կորգունաց եւ կամ մի այլ լեռնային գաւառաբարձուն եւ բարբա-
ռայն հնչմունքը լինէին ազգային Գարունութեան յարմարագոյն լեզու: Սակայն զգու-
շանալի եւ Գարագաշեանին եւ իւր համախոհից, վերայիշեալ հայկական բառից տարբեր
ուղղագրութեանն հետեւին, թէ Մեսրոպէն յառաջ եւ յետոյ յունարէն անուանց
մէջ եւս նովին ազատութեամբ կը վարուէին նախնիք մեր: Զի նոքա, ինչպէս տեսանք,
միտան այսպիսի եղելութեան բոլորովին հակառակը կը հաստատեն. իսկ նոցա գրուած
նոյց մէջ երեցած յունական մի քանի տառերու փոխփոխ կիրառութիւնը, մասամբ
ձայնական եւ քերականական օրինաց հետեւանք են, ինչպէս օրինակ իմն, Կոստանդիա-
նոս յատուկ անուանք. եւ ըստ մեծի մասին՝ թ ե ծ գարերէն վերջ եւ 'ի յետագայից
ներմուծուած են 'ի ձեռագիրս:

Արդ մինչև ցարգ տեսանք Գրգր 'ի շատե յարմարագրութեան վիճակը՝ նախնեաց
գրագէտ գաւառն կամ ցծ գար եղող երկնայնութեանց մէջ. գիտենք այսուհետեւ
երկրորդ աղբիւրը կամ արձանագրութիւնը, որոնք յաճախ անգրագէտ գաւառ ար.
տասանութեամբն եւ իրեւ մի մի առանձին կտակներ գրուեցան: Սոցա վիսյոյութիւնն,
ըստ իս, այնքան աւելի զօրաւոր է, որքան նոքա նուազ փոփոխութեան կարէին ետեւ-
արկուիլ քան զձեռագիրս, եւ կամ բնաւ իսկ չեն թարկուեցան: Այն ստակաւթիւ
արձանագրութիւններն որոնք գրուած են վիշերորդէն ցԼ դար, եւ լուսանկարով
հանուած են, ինչպիսի են Սրբաստղէմեան արձանագիրն եւ Ներսէս Կամսարականին՝
գրեալ 'ի Թալին յառաջիկայ կէս Ը դարու, միւս այլ արձանագիր անթուական զոր
Հ. Ղէզնից վ. Ալիշան գրուած կը համարի յառաջ քան զգրութիւն հայկական թուա-
կանին, մեսրոպէան յարմարագրութեան համաձայն կը գրեն ազգային եւ յունա-
կան անուանս: Իսկ յամի Տեառն 637 գրուած Կորիկոսի արձանագրութեան մի մէջ
'Αλεξάνδρε: α «Ալեքսանտրիս» գարձուած է: Ի թուին Հայոց Յ - ՅԺ 'ի Սիւնիս
գրուած Վասակայ Սիւնեցոյ կնոջ Մարեմայ արձանագրութեան մէջ, զոր աւանդե-
մէջ Ստեփ. Օրպէլեան, Կոստ գիւղաքաղաքը «Կորա» գրուած է, արաբերէն պե-
քեարը՝ «բեկար» եւ գապալը՝ «դապալ», հայերէն պալաքարը՝ «պալաքար» ։ Գրութի
Սիւնեաց եպիսկոպոսի արձանագրութեան մէջ (Սա. Օրպէլ վ. լը.) երկիցս խոս-
տակատարաց բառը «խոստակդարոց» գրուած է, եւ պարսկերէն տեհմէրտեհէ (տառ-
նապետ) «դէհմբար» ։ Յարձանագրութեան անդ Աշոտոյ (գլ. ԽԲ) արաբերէն
փեղամպերը՝ «փեղամբար» դարձուած է: Ի Թվ. ՆԺ Երեմի գաւառում գրուած
արձանագրութեան մի մէջ Սմբաւը՝ «Սմպատ» գրուած է: Ի Թվ. ՆԶ. գրուած
արձանագրութեան մէջ Ասողաւորը՝ «Ասողամր» եղած է. 'ի Թվ. ՆԶԳ գրեալ
յարձանագրութեան յունարէն չ, տառը «Միխակէի» փոխուած է: Ի Թվ. ՆԶԸ
Վահրամայ պատրիկ արձանագրութեան մէջ Ապղարիպը՝ «Ապլիարիպ» դարձուած
է: Ի Թվ. ՈԼԶ. Սկիւաւարդայ գրուած արձանագրութեան մի մէջ Θεοδόσιοςը՝ «Թէո-
րոսոգարձուած է, Նոյն քաղաքում աշտարակի ձակատին վրայ 'ի Թվ. ՈԻԶ գրուած

արձանագրութեան մէջ Ռուսերէնի հայրը Ստեփանոս՝ և Ստեփանէ՝ գրուած է։ Ի ԹՎ. ՈԿԱ և ՈԿԸ 'ի Երևանի գրուած արձանագրութեան մէջ տաճկերէն պիւրաքը «բուրը» գրուած է։ Ի Բազմայր գրուած արձանագրութեան մէջ Մանկի՛ երեցը և Մանդիկ՝ եղած է։ Ի ԹՎ. ՈՁԳ 'ի Հառիճա գրուած արձանագրութեան մէջ Բաղդասարը «Պաղ-տասար» գրուած է։ Այսպէս է նաև Գ շայոց Կապան քաղաքում գրուած արձա-նագրութեան մէջ. իսկ Յակոբընը՝ «Յակոբան»։ ՈՂԱ և ՈՃԱ թուականներում 'ի Սանահին գրուած արձանագրութեանց մէջ տաճկ. Գորգամաղը «Ղորխմաղ» դարձուած է. իսկ պէկը՝ մերք բէգ է, մերք բէկ գրուած։ Ի ԹՎ. ՁԻԹ 'ի Գանձասար գրուած արձանագրութեան մէջ Վախթանգը՝ և Վախթանիկ՝ Լղած է։ Ի ԹՎ. 1143 Էջմիածնի աւագ դրան վերայի արձանագրութեան մէջ Լատին Albertus և Ալպետոս և տաճկ. Ալաշանը՝ Ալաճան։ Ի ԹՎ. ՁՁԹ 'ի Վարջահան գրուած արձանագրութեան մէջ «Պրանկին» գրուած է. և ՌՃԾ ԹՎ. արձանագրութեան մի մէջ «Յակ. Ալփեայ»։ ՌՃԱ թուին գրուած արձանագրութեան մէջ «Մարուքի» գրուած է։ Ի ԹՎ. ՌՄԻ. գործուած արձանագրութեան մի մէջ Maddalena «Մատլիան» դարձուած է, և Զերեգիան՝ «Զրպիտ»։ Ի Թուին 114 Նախընտանեցոյ ուրուստ արձանագրութեան մէջ Carissimus «Խարիսիմ» դարձուած է։ Յամի Տեառն 1737 Վենետիկ չայոց Ս. Խաչ եկեղեցւոյ արձանագրութեան մի մէջ Venezia «Վենետ» գրուած է և Վրթանէսը՝ Օսթձանց «Վրթանէս»։ Եւ յամին 1773 'ի Հռոմ գրուած արձանա-գրութեանց մէջ Propaganda մերք և Փռօփագանտա և մերք այլ «Փռօփական-տա» դարձուած է։

Արդ յարձանագրութեանց մէջ բերուած այս և այսպիսի գեւ. ուրիշ շատ օրինակ. ներ, առանց երկբայութեան կապացուցանելն մեզ, թէ ոչ միայն Թ դարէն վերջ, ինչպէս կը կարծուէր, այլ նոյն իսկ յԱ և յԹ դարերում չայոց անգրագէտ դասը յաճախ հակառակ մեարդութեան յարմարագրութեան՝ մերք իւր գաւառական ար-տասանութեան համաձայն և մերք ալ դրացի աղջաջ նմանաձայնութեամբ կար-տասանէր, թէ բնիկ և թէ օտար անուանն, ըստ չափու աղբեցութեան՝ զուր կրէց 'ի նոցանէ։ Այնպէս որ չայեցի և արեւելեան անուանց ուղղագրութեան մասին՝ գրա-դէտ և անգրագէտ դասուց մէջ տարբերութիւն չի կայ կամ խիստ քիչ. իսկ յոյն և լատին անուանց ուղղագրութեան մէջ՝ ուր առաջինը գուն ուրեք և այն իսկ ձայնա-կան կամ քերականական օրինաց վրայ հիմնեալ մեարդութեան յարմարագրութեան բացառութիւններ կ'ընէր, վերջինն ընդ հակառակն, յաճախ տգիտութեամբ մե-րովբեան և յոյն բաղաձայն տառից աստիճանաւորութեան՝ կը շփոթէր զանոնք ընդ իրեարս. ուստի ինչպէս խոսակցութեան մէջ չէր գիտեր քերականական կանոն-ներ, այսպէս այլ արտասանութեան մէջ չէր կարող լաւ ըմբռնել և պահել ռուբր, միշակ և թաւ տառերու առաւմտայնակութիւնը։ Նոցա լեւերէն այնպէս կը զգային յունարեան տառից և յունարեանի համազօր հայերէն բաղաձայններ, ինչպէս կը զգան և կ'ըմբռնեն այսօր տաճկաչայոց լեւերը՝ եւրոպական աղջաջ տառերն. որք օրինակ իմե bête (բէտ) պիղ կը լա՛ն և Garda (Գարգա) կարտա։ Սակայն այս ենթագրու-թիւնս գիւրաւ կատարեալ իրողութիւն կը գառնայ, եթէ գիտենք, որ նոյն իսկ այսօր երբ գրագէտ ոմն ուզէ՝ մի օտար լեզուի բառ ինչ կամ խոսակցութիւն, զոր կը լսէ կենդանի ձայնիւ բայց չի ճանաչէր, վերագրել ըստ ըմբռնման տարբեր ուղղագրու-թիւն առաջ կուգայ անոր քան զորս արտասանէ ճառարսան. այս ինչն է, կարող է ձէն՝ է կամ են իմեաւալ, և ցէն՝ և։ Այսպէս է և էր երբեմն չայոց անգրագէտ մասը։